«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 7;
08.02.2024 թ.

1. 2023-2024թթ ուստարվա առաջին կիսամյակի քննությունների ընթացքի և ի հայտ եկած խնդիրների վերաբերյալ

1.1. ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի քննություններից առարկայական պարտքեր ունեցող ուսանողներին տալ քննություններին մասնակցելու ևս մեկ հնարավորություն՝ մինչև 2024թ. փետրվարի 23-ը:

1.2. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին և դասախոսական անձնակազմին մեծ ուշադրություն դարձնել ինքնուրույն աշխատանքների կատարման որակին ու բովանդակությանը:

1.3. 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակում կրեդիտային պարտք ունեցող, բայց ուսումնական պարապմունքներից 50% և ավելի անհարգելի բացակայություններ չունեցող ուսանողներին ընձեռել 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի քննություններին մասնակցելու ևս մեկ լրացուցիչ հնարավորություն՝ վճարելով 10000 դրամ յուրաքանչյուր առարկայի համար: Ուսանողները մասնակցում են դասընթացներին, այնուհետև ստանում քննությանը մասնակցելու հնարավորություն՝ մինչև 2024թ-ի մարտի 7-ը: Խմբերի ձևավորման դեպքում քննությունները կազմակերպվում են թեստային կենտրոնում, իսկ անհատական գրաֆիկով հանձնող ուսանողների համար՝ ամբիոններում (միայն 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի համար):

1.4. 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապ-մունքներից 50% և ավելի անհարգելի բացակայություններ ունեցող ուսանողների բացակայությունների լրացումը կազմակերպել վճարովի հիմունքներով՝ հետևյալ կեպ.

- 50-ից 75% անհարգելի բացակայությունների դեպքում՝ յուրաքանչյուր լրացվող ժամի համար, ուսանողը վճարում է 5000 ՀՀ դրամ գումար, մասնակցում դասընթացներին և ստանում քննությանը մասնակցելու հնարավորություն՝ մինչև 2024թ. մարտի 7-ը,

- 75%-ից ավելի ժամ անհարգելի բացակայությունները ձևակերպվում են որպես կրեդիտային պարտք, ուսանողը վճարում է կրեդիտին համարժեք ՀՀ դրամ, մասնակցում դասընթացներին և ստանում քննությանը մասնակցելու հնարավորություն՝ մինչև 2024թ. մարտի 7-ը:

1.5 44-օրյա պատերազմի մասնակից, մարտական հերթապահություն իրականացրած ուսանողներն ուսումնական պարապմունքների անհարգելի բացակայությունները լրացնում և քննությունները հանձնում են անվճար հիմունքներով:

1.6. Բանակից զորացրված (պատերազմի մասնակից, մարտական գործողություններին մասնակցած, մարտական հերթապահություն իրականացրած)

ուսանողների քննությունները, նախորդ ուսումնական տարիների ընթացքում ՀԱԱՀ-ից հեռացված և 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակում ուսանողական իրավունքները վերակագնած ուսանողների առարկայական տարբերությունների հանձնումը՝ խմբերի ձևավորման դեպքում կազմակերպել թեստային կենտրոնում, իսկ անհատական գրաֆիկով հանձնող ուսանողների համար՝ ամբիոններում (միայն 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի համար):

2. Աշխատանքային կիսամյակի արդյունքների ամփոփման հարցի վերաբերյալ

2.1. Ընդունել ի գիտություն:

2.2. Հետևողական աշխատանք իրականացնել համալսարանի գործընկեր կազմակերպությունների հետ՝ աշխատանքային կիսամյակի սկզբունքով արտադրական պրակտիկայի մեկնած ուսանողների գնահատման օբյեկտիվությունն ապահովելու նպատակով:

2.3. ՀԱԱՀ հեռակա ուսուցման համակարգի ավարտական կուրսերի արտադրական պրակտիկայի գնահատականով հնարավոր չէ ՄՈԳ (միջին որակական գնահատական) հաշվարկել, քանի որ այն կիսամյակի միակ գնահատականն է:

3. Ագրոնոմիական ֆակուլտետի ավարտական կուրսերի ուսանողների ավարտական աշխատանքների պաշտպանության ժամկետները փոփոխելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ

Ագրոնոմիական ֆակուլտետի 2023-2024 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատի 5-րդ, առկա ուսուցման համակարգի բակալավրիատի 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների, ինչպես նաև մագիստրոսական թեզերի պաշտպանությունը կամակերպել 2024թ. մայիսի 6-ից 13-ն ընկած ժամանակահատվածում:

4. Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ուսանող Վանիկ Արմենի Գրիգորյանի ավարտական աշխատանքի պաշտպանության ժամկետի փոփոխության հարցի վերաբերյալ

Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի 2023-2024 ուստարվա հեռակա ուսուցման բակալավրիատի ԳՄՄՍ կրթական ծրագրի 6-րդ կուրսի ուսանող Վանիկ Արմենի Գրիգորյանին թույլատրել ավարտական աշխատանքը պաշտպանել 2024թ. հունիսի 21-ին՝ մագիստրատուրայի Մեքենասարքավորումների ճարտարագիտություն կրթական ծրագրի ուսանողների հետ միասին:

5. Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի պրակտիկաների համակարգողի թափուր հաստիքը համալրելու հարցի վերաբերյալ

Ընդունել ի գիտություն:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ԶԱՔՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ